

ՀԻՆ ԹՈՒԻՂՑԵՐԻ

ՄԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Ստորեւ թերում ենք Մ. Վարանդեանի մէկ յօդւածը, որ նա, 1917 թ. յունիսին, զրել է «Հայրենիք»-ի համար եւ որ մնացել է անտիպ: Վարանդեանը դեռ այդ ժամանակ գործակցում էր Ազգ. Պատիբակութեան եւ Պօղոս փաշա Նուպարի եռանդուն աշակիցներից մէկն էր: Յօդւածը ուղարկելով «Հայրենիք»-ի խմբագրութեան՝ նա գըրում էր. «Ընկերնե՛ր, կարող էք հրատարակել ներկայ յօդւածը: Պատիբակութիւնը արտօնած է ինձի: — Մ. Վ.»: Գրութեան բնագիրը գտնուում է Հ. Յ. Կենտր. Դիւանում. Գործ թիւ 1405: ԽՄԲ.



Դրեթէ այլեւս գաղտնիք չէ — և իստալական թերթերի մէջ եղանարդէն որոշ ակնարկներ — որ անցեալ տարի Ֆրանսիոյ, Անդլիոյ եւ Ռուսաստանի միջեւ կայացել է համաձայնութիւն՝ Թիւրքիան բաժնելու նպատակով:

Ռուսաստանը պահանջել է Պոլիսն ու երեք գրաւուած հայ վիլայէթները, Անդլիան՝ Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիւրիան, Կիլիկիան եւ միւս երեք հայ վիլայէթները (Սերաստիա, Խարբերդ եւ Դիարբերք):

Այդ կարեոր համաձայնութիւնը կնքւելուց յետոյ, Հայկական Պատկրակութիւնը, որի կարծիքը, բնականաբար, չեն հարցըել Հայաստանի բախտը որոշելու միջոցին, ամէն ճիգ թափել է, որպէսզի գէթ Հայաստանի անջատուած մասերին տրւի լայն ինքնօրինութիւն: Ետ շատ աշխատել է մասնաւորապէս ձեռք թերելու այդ ինքնօրինութիւնը Ֆրանսիայի կողմէն գրաւելիք Հայաստանի մէջ: Եւ նրա ճիգերը պսակել են աջողութեամբ: Ֆրանսիական կառավարութիւնը խոստացել է յարգել հայ ազգային տենչանքները, ստեղծել ինքնորէն Հայաստան, որի մէջ պիտի մտնէին Սերաստիոյ, Խարբերդի, Դիարբերքի վիլայէթները, Կիլիկիան եւ նոյն իսկ Խսկենդերուն նաւահանգիստը: Ինքնավար Հայաստան՝ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ:

Սակայն, այսօր կացութիւնը հիմնականապէս փոխւած է: Ռուսական յեղափոխութիւնը եւ Ամերիկայի թատերամուտը տակնուվը

բա արին բոլոր եղած համաձայնութիւնները, բացի Լոնդոնի ծահօթ համաձայնութիւնից, որ արդելում է անջատ խաղաղութիւն:

Ի՞նչպէս զիտէք, ոսւս յեղափոխութեան առաջին յայտարարութիւնից մէկն եղաւ՝ «Ո՛չ մի անէքսիոն»: Եւ արդէն իսկ ժամանակաւոր կառավարութիւնը առաջարկել է Դաշնակիցներին վերաբննել տեղի ունեցած համաձայնութիւնները: Ֆրանսիա եւ Անգլիա աւելն իրենց համամտութիւնը: Նախարարապետ Ռիքո յայտարարեց հանդիսաւորապէս Խորհրդարանի մէջ, որ Ֆրանսիան նոյնպէս կը հրաժարւի անէքսիոնից, բայց որ, այսուամենայնիւ, պիտի շարունակէ պահանջել Ալզաս - Լորենը, քանի որ դա չի դիտւիր իբրեւ անէքսիոն: Ռիքոի այլ վճռական եւ արի յայտարարութիւնը մահացու հարւած տւեց ֆրանսիական coloniaux-ների^{*)} ախորժակներին . . . :

Դա մէկն է ոսւս յեղափոխութեան բարերար հետեւանքներից . . . : Տարակոյս չկայ, որ քոլոնիաների այլ քլիկը իր անսահման նւաճողական ախորժակներով — Մարոքի, Սիւրիայի և այլ վայրերի մէջ — չատ է վնասել համաշխարհային խաղաղութեան դործին . . . : Եւ երբ այսօր ոսւս յեղափոխականների մի մասը յայտարարում է, թէ ներկայ պատերազմը արդիւնք է բոլոր երկիրների իմպերիալիստական (նւաճողական) քաղաքականութեան, անտարակոյս, ճշմարտութեան մի մասնիկ կայ այդ յայտարարութեան մէջ: (Անուրանալի է, այնուամենայնիւ, որ պատերազմը շղթայագերծողը Գերմանիան էր, որ կը ձգտէր համաշխարհային հէմէմոնիի):

Դասնանք մեղի հետաքրքրող համաձայնութեան:

Միանդամայն հակառակ լինելով անէքսիոնի, նոյն Ռուսաստանը, յանձին ժամանակաւոր կառավարութեան, հրաժարւեց Կ. Պոլսից, հրաժարւեց Եւ Մեծ Հայքի երեք վիլայէթներից: **)

Հետեւարար, Անգլիան էլ կը հրաժարւի Միջագետքից, Ֆրանսիան՝ Սիւրիայից, Կիլիկիայից ու միւս երեք հայ վիլայէթներից:

1916-ի համաձայնութիւնը ոչնչանալով՝ Հայկական Պատուիրակութիւնը կը վերադառնայ, բնականարար, իր նախնական ծրագրին: Այն է՝ պահանջել որ ստեղծւի ինքորէն (autonome) Հայստան - րազկացած բոլոր վեց վիլայէթներից եւ Կիլիկիայից — պետութիւն-

*) Դեռ այսօր եւս ֆրանսիոյ մէջ կայ բաւական զօրաւոր կուսակցութիւն, որ կուզել նոր զաղութեան նախնել, մանաւանդ Սիւրիան:

Մ. Վ.

**) Եւ Միլիլիովին հեռացրին արտաքին գործոց նախարարութիւնից, որով հետեւ նա կը պահանջէր եւ Պոլիսը, եւ էրգումի վիլայէրը:

Մ. Վ.

ների հովանաւորութեան տակ։ Այդպէս է Հայութեան ձնչող մեծամասնութեան բաղձանքը։

Հրաժարւել անէքսիոնից չի նշանակում պահել Հայաստանը իր նախկին վիճակի մէջ։ Բոլոր Դաշնակից պետութիւնները, մասնաւորագէս նոր Ռուսաստանն ու Ամերիկան, քանիցս արդէն շեշտեցին, որ ձնչւած ազգութիւնները պէտք է ստանան իրաւունք՝ իրենց բախտը սեփական ձեռքով տնօրիննելու։ Ինչպէս նորերս շատ ճիշտ կերպով կը յայտարարէին Եալմար Բրանտինդ և Վանդերվելլ՝ «Հայաստանը իր գարսաւոր լծից ազատելլ չի նշանակեր առնելու առաջարկ»։

Պարիզ, 25 Յունիս

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԱՐՄԵՆ ԳԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ Յ. ԴԱՎԹԵԱՆԻՆ

Արմեն Գարօ Ամենայն Հայոց կաքուղիկոսի եւ Հ. Յ. Բիւրյայի յանձնարարութեամբ, 1917 թ. ապրիլին, կովկասից մեկնեց Ամերիկա ի նպաստ հայկական դատի աշխատելու համար։ Յովնան Դաւթեանը գտնուում էր Ժընեվում, «Իրօշակ»-ի խմբագրատանը, ծանր հիւանդ վիճակում։

ԽՄԲ.

Պատոն, 7 Օգոստ. 1917

Սիրելի Յովնան,

Պետրոգրադից մեկնելիս քեզ մի քանի տող դրեցի, բայց չզետեմ տեղ հասաւ թէ չէ, փոստի վարչութիւնը այնքան անկանոն էր դարձել, որ նամակներն ու հեռադիրները ամփաներով մնում էին լինեած փոստատանը։

Այսօր 5 օր է որ տեղս հասայ։ Տեսնեցայ Արտաւազին եւ Տամաւեանին *), հետ Երկուսով էլ շատ օգտակար եւ բեղմնաւոր գործունէութիւն են ունեցած այստեղ։ Ի հարկէ, ևս էլ կաշխատեմ այդ ուղղութեամբ շարունակել նրանց սկսածը։

Գալով իմ յատուկ միսիոնին, անշուշտ, Միքայէլից ***) լսած կը լինէք։ Իմ գործունէութիւնը պիտի սահմանափակւի միայն ամերիկան շրջանակներում եւ պիտի աշխատեմ ճիշտ այն ուղղութեամբ

*) Արտաւազ Հանրժեան եւ Միհրան Տամաւեան, որոնք ազգային առաջնութեամբ, գտնուում էին Միացեալ Կահանգներում։
ԽՄԲ.

**) Մ. Վարսենյեանից։

ԽՄԲ.

ինչ որ Փաշան արդէն ընդգրկել է քաղաքական այս փոփոխութիւններից յետոյ, այսինքն՝ մեր դատի պաշտպանութեանը մէջ աւուն կերպով շահազրդուել Ամերիկացոց ։ մանրամասնութիւնները Միքայէլից կիմանաս : Փաշան այստեղ դրած Յունիս 4 թւակիր նամակում շատ լւաւ ընդդժած էր մեր բոնելիք նոր գերքը Խուսական Յեղափոխութեան եւ Ամերիկայի միջամտութեամբ առաջ եկած նոր պայմաններում : Աւելի մանրամասնութեանց մէջ չեմ մտնում :

Այստեղ լսեցի, որ Միքայէլը մտազիր է Կովկաս վերագառնալ եւ այնտեղ մնալ . սա ի՞նչ խապար է : Մենք Կովկասում մտածում էինք գեր նոր ուժեր եւս ուղարկել արտօսահմանեան մեր պրոպագանդը ուժովցնելու եւ ահա մեր միակ մարդն էլ թողնում հեռանում է Փարիզից : Լաւ կը լինէր, որ Միքայէլը այդ մասին Կովկասի ընկերներու համաձայնութիւնը առնէր եւ յետոյ միայն տեղիցը չարժւէր, որպէսզի անախորժ թիւրիմացութիւններ առաջ չգայլին : *)

Կովկասի ընկերներու ցանկութիւնն էր որ գուշ այդ տեղից մի քիչ աւելի աշտի գործունէութիւն սկսէիք ընկերվարական զանազան հաւածներում, մեր դատի որոշ եւ պարզ ձեւակերպումը բոլորին համար ընդունելի դարձնէիք : Կովկասի բոլոր ըրջաններու մէջ համոզած են, որ եթէ մեր պրոպագանդը լաւ տանենք, ներկայ պայմաններում մեր իգէալի տիտրում իրադուրծումը կարող ենք ձեռք բերել, այսինքն՝ 6 վիլայէթները մի քիչ սրբազրւած սահմաններով եւ կիլիկիայի մի մասը միացեալ մի ինքնավար Հայաստան է դառնալու բոլոր պետութիւններու պաշտպանութեանը տակ, բայց ուրովհետեւ հաւաքական պաշտպանութիւնը անդորձնական է եւ, որ զիաստորն է, մեր քանդւած հայրենիքը պէտք ունի վերաշնուրեան

*) Մ. Վարանդեանը կովկաս էր մեկնում իր անձնական ցանկութեամբ : Ասիրից օգտելով՝ Ազգ. Պատուիրակութիւնն էլ նրան որոշ յանձնարարութիւններ էր արել : Այդ մասին ինքը՝ Մ. Վարանդեանը հետեւեալն է գրում Հ. Յ. Ամերիկայի կենտր. կոմիտէին, 1917 թ. օգոստոս 5-ին, Ֆընեւից. «Վազը պիտի մեկնեմ Պարիզ, այնտեղ մի շաբաթ մնալուց յետոյ, պիտի երբամ կոնդոն : Որոշած է իմ Պետրոգրադ եւ Կովկաս երթալը... Մի համի ամսէն գուցէ վերադասամ : Այդպէս է Պատուիրակութեան զերս ցանկութիւնը : Բայց քերեւս կովկասան գործերը եւ ընկերները պահեն ինձ : Ես պաշտօն ունեմ, ի միջի այլոց, ներկայացնելու Պատուիրակութիւնը համազգային կոնգրեսն, երեւ այդպիսին տեղի ունենայ Թիֆլիսում կամ Եջմիածնում : Գոյն եւ այն անսահման վատահութիւնից, որ տածում է գէպի ինձ Պատուիրակութիւնը : Եւ ես կաշխատեմ միշտ ի գործ դնել այդ վատահութիւնը յօգուտ մեր դատի » :

ու մի 20 - 25 տարւայ իրական պաշտպանութեան, մինչեւ որ հայ ժողովուրդը կարողանայ իւր իսկ սեփական ուժերով կառավարել այդ նոր ստեղծւելիք պետութիւնը, անհրաժեշտ է որ մի որ եւ է մեծ պետութեան յանձնելի Հայաստանի վերաշինութիւնը եւ կազմակերպումը: Իսկ թէ ո՞րն է լինելու այդ իսկական պաշտպան պետութիւնը, գրա մասին մեր մէջ երկու կարծիք չկայ. Կովկասում էլ բոլոր հոսանքները համակարծիք են Փաշայի նոր մտքին, որը առանց նրանից լուր ունենալու մենք էլ էինք մտածում: *)

Անշուշտ, Դաշնակիցներու մէջ այս հարցի նկատմամբ կան զանազան ցանկութիւններ եւ իրար հակասող ուղղութիւններ: Մեզ կը մնայ այնպէս տանել մեր գործունէութիւնը եւ պրոպագանդի գործը, որ մեզ համար ամենից աւելի ցանկալի combination-ը յաջողւի: Եւ ինձ թւում է, որ դէպքերի ներկայ դասաւորութիւնը պիտի ստեղծէ մի զրութիւն, որը հնարաւորութիւն պիտի տայ մեր նախընտրած combination-ի յաջողութեանը: Թէեւ առ այժմ բաւական դժւար է երեւում արտաքուստ:

Կովկասի մասին տալիք լուրերս արգէն ուշացած են. Թիֆլիսից հեռացել եմ Ապրիլի 6-ին: Այն տաենւայ զրութիւնը լաւ կարելի էր հաշւել, բայց մտահագիչ նշաններ երեւում էին: Թուրքերու զինումը մէկ կողմից, իսկ վրացոց սևիարատիստական շարժումն էլ միւս կողմից մերոնց զրել էին երկու կրակի մէջ: Եւ կեանքի ironie այստեղ էր բերէ մեղ, որ մեր ընկերները հրաժարւում էին, կամ, աւելի ճիշտը ըսած, աշխատում էին զանազան սովորմներով մեր «sociologue»-ներու կազմած 1907 թւի ծրագրին մէջ յիշած Կովկասեան Փեղերակիզմը չեղեալ նկատել՝ դանելով, որ այդ զիցերական Փէղէրալիզմը անզործազրելի է մեր իրականութեան մէջ եւ նոյն իսկ վնասակար 1,800,000 հայութեան շահերուն: **)

Միիթարական լուր մը ունեմ տալու զրաււած վայրերու մասին: Շնորհիւ յեղափոխութեանը մեզ յաջողւեց հին վարչութիւնը քչել տալ երկրից եւ նրա տեղը հորը հաստատել: Տաճկահայաստանի

*) Խօսքը ամերիկան հոգատարութեան մասին է:

ԽՄԲ.

**) «Զվեցերական Փեղերակիզմը», այսինքն՝ Կովկասը մասր կանոնների բաժնելու ծրագիրը: Գանձնկցութեան դեկալարութեան մէջ երկիր էր յայտնում, թէ մասր միաւորների մէջ հայութիւնը կարող է զնի զնալ իսլամ եւ վրացի մեծամասնութեան: Աւելի նպատակայարմար էր համարւում սահմանների վերաբանումով ազգային շրջանների ստեղծումը:

ԽՄԲ.

գրաւուած մասին ընդհանուր կառավարիչ նշանակուեց գեներալ Աւերիանով (մի բարեմիտ ուռւս), իսկ նրա քաղաքական գործերուն օգնական Տոքթ. Զաւրիել՝ տալրով նրանց կատարեալ ազատութիւն երկրի վարչութիւնը գնելու նոր հիմքերու վրա։ Եւ այս բոլորը ժամանակաւոր բնոյթ մ'ունի, սպասելով Հայաստանի բախորի որոշմանը հաշութեան կոնդրէէն։ Երկրի վերաշինութեան գործն էլ նրանց յանձնեցաւ։

Առ այժմ այսքան։ Սպասում եմ ձեր լուրերուն։ Առ այժմ կը մնամ Պոստոն, այսուեղի մեր զազութին հետ մի քիչ ծանօթանալու համար, բայց հաւանական է, որ կը հաստատեմ նիւ - եռքում, ուր են գտնւում իմ ծանօթները։

(Յետոյ՝ տասը տող անձնական ինդիբներ։ կը հարցնէ կնոջ և գաւակի վիճակի մասին)։

Բարեւիր իմ կողմից Աւոին, Անտոնին եւ Լեւոնին։ *)

Համբոյրներով՝ Գ.Ա.ՐՕ

Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան

Թղթածրար, թիւ 1405

Ո.Ո.Ս.Տ.Ո.Մ.Ի ՆԱՄԱԿԸ Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

1917 թ. աշնանը եւ ձմեռը Ռոստովը գտնելում էր Պետրոգրադում եւ Ստոկհոլմում։ Այս վերջին քաղաքում պիտի գումարելը Ընկերվարական Միջազգայինի համագումարը եւ Ռոստովը Հ. Յ. Դաշնակցութեան կողմից գնացել էր մասնակցելու համագումարին եւ հայկական պահանջները ներկայացնելու։ ԽՄԲ.

2/XII, 1917, Ստոկհոլմ

Սիրելի ընկերներ,

Երէկ ուղարկեցի ձեզ «Հայրենիք»-ի հասցեով մի օրինակ «Un avant-projet du programme de Paix», Հրատարակուած Համագումարի կազմակերպիչ կոմիտէի կողմից։ Ես արդէն ձեզ առաջւանից յայսուել էի, եւ զուք էլ կը տեսնէք, որ չէզոք երկիրների պատերակների ժողովը պահանջել է Հայաստանի համար Indépendance et rétablissement territorial de l'Arménie Turque avec garantie

*) Աւետիփ խահակեան, Տիար Անտոն եւ Լեւոն Ներուզ։

ԽՄԲ.

de développement économique. *) «Rétablissement territorial» ասելով պէտք է հասկանալ հեռացումը հայկական գաւառներից այն մահմետականների, որոնց տեղաւորել են քաղաքական նպատակով, իսկ գарantie de développement économique-ը նշանակում է եւթ դէպի ծովը: Նոյն պահանջը դրւած է եւ Ահաստանի համար:

Մանիքէստին կցւած Մémoire explicatif-ի մէջ ընդունում են (4, 29) «qu'il est impossible humainement d'attendre d'eux (հայերից) qu'ils retournent sous le joug». **) անհրաժեշտ եւ ստիպողական են համարում մեր հարցի լուծումը, բայց դժւարին:

Դժւարութիւնները երկու տեսակի են, նրանց կարծիքով՝ այսպէս ասսած՝ ներքին եւ արտաքին. ներքին դժւարութիւններին են վերաբերում հայերի սակաւ թիւը՝ այսքան կոտորածներից յետոյ, եւ այն հարցը, թէ ինչպէս պիտի կառավարւեն մահմետական տարրերը: Հարկ եղած բացատրութիւնները տեր թւի մասին, աւելացնելով, որ մի կողմը թողած թիւրքական տիրապետութեան տակ այժմս գտնուզ հայերին, միայն թիւրքիայից դուրս հաստատւած հայերը կարող են լիցնել Հայաստանը, եթէ սա ազատ հռչակւի: Գալով կառավարելու եղանակին՝ զրա վրա կանգ չառայ առանձնապէս. գուցէ մեկնելուց առաջ գրաւոր բացատրութիւն ներկայացնեմ. այնտեղ կը շեշտամ մեր մէջ ընդունւած լայն ապակենարունացման սկզբունքը ների վրա, որ չափազանց կը դիւրացնէ երկիրը կառավարելու դուրսը:

Աւելի լուրջ են նկատում արտաքին դժւարութիւնները, որ նորանց համոզումով պիտի բխին Գերմանիայից: Երես 22 պարզ ասուած է, որ Գերմանիան հակառակ կը լինի թիւրքիայի բաժանման, որովհետեւ հաշտութեան համար անհրաժեշտ պէտք է լինեն փոխադարձ զիջումներ, ուստի մեր գատը կարող է տուժել: Սա այնպիսի խընդիր է, որ միայն դէպքերից, ապազյի անցուգարձից է կախւած:

Թէեւ, գուցէ, մօտ ապազյում Գերմանիայի դիրքը պարզւի: Եթէ զինագագարի, կամ անջատ հաշտութեան ինդիրը առաջ գայ, եթէ կենինը եւ Գերմ. կանցլերը իրարու գան, ևթէ ոչ ամբողջ Հայաստանի, գէթ գրաւած վայրերի ինդիրը անհրաժեշտորէն կը դրսի: Տեսակէտները երկու կը լինեն՝ զէնքի իրաւունք եւ ինքնորոշման սկզբունք: Գերմանիան կը պահանջէ՝ արդիօք, որ գրաւած վայրե-

*) Տանկահայաստանի անկախութիւն եւ հողային վերականգնում՝ տնտեսական զարգացման երաշխաւորութեամբ:

ԽՄԲ.

**) Որ մարդկօքէն անհար է սպասել նրանցից, որ վերադառնան լծի տակ:

ըստ վերադարձւեն թիւրքիային։ Բարեբախտաբար, մոռս։ Լեհաստանի խնդիրը կայ. ինչպէս Գերմ. դէնքով նւաճւած լեհաստանը ստանում է անկախութիւն, այնպէս էլ ոռւաների դէնքով նւաճւած Հայաստանը պէտք է ստանայ անկախութիւն։ Մեր պահանջը աւելի իրաւացի է, քանի որ Վասպուրականը աղատւել է հայերի ազստամբական ուժերով. Վանը՝ արդէն աղատւած՝ դրւել է մոռսաստանի հովանաւորութեան տակ։ Եթէ խնդիրը դալու վնի ինքնորոշման սկզբունքին, ժողովրդական քւէարկութեան, — հայ ժողովուրդը վաղուց իր քւէները տւել է անհամար դիակներով։

Զինագաղարի խնդիրը ո՞ւր պէտք է տանի մեզ վերջ ի վերջոյ։ Շւարած եմ մնացել։ Հոսանքը մեզ քշում է, եւ դեռ քշելու է, աշխատենք՝ ժայռերի չզարնւել։ Մի քանի օրից յետոյ, փորձելու եմ անցնել մոռսաստան, բայց չդիտեմ՝ ոլիսի կարողանա՞մ կովկաս ինձ ձգել։

Զեր՝ ԱռՍՈՅՄ

